

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/2

9 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ 07.08.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 14.05.2014 թ-ի թիվ 450 որոշումը և որպես հետևանք Նոր Նորքի ՀՏ 20.06.2014 թ-ի թիվ 027623 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները, ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության (այսուհետ նաև՝ Տեսչություն) կողմից 2014 թ-ի մայիսի 16-ին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ-ին է (այսուհետ նաև՝ Բողոք բերող) հանձնվել Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին 14.05.2014 թ-ի թիվ 450 որոշումը, որի «Պարզեցի» վերտառությամբ բաժնում նշված է՝ «14.05.2014 թ-ի դրությամբ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ-ն ՀՎՀՀ 00842235 ք.երևան, Տերյան 66-39, չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 23523328 դրամ, որից ԱԱՀ 14218 դրամ (2014թ. մարտ ամսվա հաշվարկ), հաստատագրված վճար՝ 23509110 դրամ (2006թ. օգոստոսից 2012թ. ապրիլ ամիսների հաշվարկներ), որը ենթակա է գանձման»:

Օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածների դրույթների համադրությունից հետևում է, որ Տեսչությունը, որպես վարչական մարմին, 14.05.2014 թ-ի թիվ 450 վարչական ակտն ընդունելուց առաջ, իր նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի ընթացիկ փուլում չի ապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, հնարավորություն չի տվել Բողոք բերողին արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Դեռ ավելին, 23.06.2014 թ-ին (այսինքն՝ 14.05.2014 թ-ի որոշումն ստանալուց 39 օր հետո) փոստային առաքմամբ ստացվել է անհասկանալի մի Ծանուցագիր, ՀՀ ֆինանսների նախարարի 19.06.2014 թ-ի թիվ ԱՀ 027623 Հանձնարարագիրը ու Տեսչության 20.06.2014 թ-ի Հարկ վճարողի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին թիվ 027623 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարի 19.06.2014 թ-ի թիվ ԱՀ 027623 Հանձնարարագրով ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի ՀՏ աշխատակիցներին հանձնարարվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ պատկանող գույքի վրա ընդհանուր 23523.3 հազ. դրամ չկատարված պարտավորությունների չափով արգելանք դնել (այսինքն, այն չափով, որքան որ նշված է 14.05.2014 թ-ի թիվ 450 որոշման մեջ):

20.06.2014 թ-ի Հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 027623 որոշման մեջ նշված է, որ ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը և թիվ 450 վարչական վարույթի նյութերը պարզվել է, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ ք. Երևան, Տերյան 66-39) 14.05.14 թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 23509110 դրամ, որից 23509110 դրամ հաստատագրված վճար: 14.05.14 թ-ին ՀՏ պետի կողմից որոշում է կայացվել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից 23509110 դրամ գանձելու վերաբերյալ: Ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը, հաշվի առնելով հարկերը ժամանակին չվճարելու հանգամանքը՝ իրականացված վարչական վարույթի ընթացքում ձեռքբերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վերը նշված վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը: Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 և 30.2 հոդվածներով որոշվել է արգելանք դնել հարկ վճարող «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ պատկանող գույքի վրա, Առէկսիմ, Արդշինինվեստ և ՎՏԲ Հայաստան բանկերում ունեցած բոլոր հաշվարկային հաշիվների վրա, ինչպես նաև դրամարկղի վրա 23509110 դրամի չափով:

Նախ, Բողոք բերող անձի համոզմամբ, գործունեության ողջ ընթացքում որևէ հիմք չենք տվել ենթադրելու վարչական մարմին, որ կարող ենք թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները), որի վերաբերյալ հիմքերը (ապացույցները) առկա են վարչական մարմնում, ուստի Տեսչությունը գույքի վրա արգելանք դնելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված որևէ հիմք չի ունեցել: Բացի այդ, ուսումնասիրելով 23.06.2014 թ-ի փոստային առաքմամբ ստացված երեք փաստաթղթերը, համադրելով դրանցում և 14.05.2014 թ-ի թիվ 450 որոշման մեջ առկա տարեթվերը, որոշման համարները, թվերը՝ գումարային առումով, Բողոք բերողի համար պարզ էր, որ հրավիրվում է դեռևս 14.05.2014 թ-ին ընդունված թիվ 450 որոշմանն առնչվող վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը, որպիսի պահանջը չի բխում ՀՀ օրենսդրությունից: Բացի այդ, անհրաժեշտ ենք գտնում նշել, որ արդեն իսկ 20.06.2014 թ-ին («ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ «Քանաքեռ» մասնաճյուղի 01.08.2014 թ-ի գրության համաձայն) 23509110 դրամի չափով արգելանք էր դրվել «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ում բացված Բողոք բերողի հաշվի վրա և մինչև վերը նշված երեք փաստաթղթերը ստանալու օրը ու դրանից հետո մինչ օրս նույն գումարի չափով արգելանքը գործում է:

Անհրաժեշտ է նշել և հավաստել, որ եթե 14.05.2014 թ-ի թիվ 450 որոշումն ընդունելուց առաջ Տեսչությունը որևէ կերպ իրազեկեր Բողոք բերողին, որ ընդունվելու է վարչական ակտ, ապա Բողոք բերողը, կամ նրա ներկայացուցիչը պարտադիր կարգով կմասնակցեին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը: Այսինքն, վերոնշյալ պարագայում Բողոք բերողը զրկվել է Օրենքի 38-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկվող անձին վերապահված իրավունքների իրականացման հնարավորությունից:

Տեսչության 14.05.2014 թ-ի թիվ 450 որոշումն ստանալուց հետո 21.05.2014 թ-ի թիվ 01-03/113 գրությամբ Տեսչությանը ներկայացվել են փաստարկներ և հայտնվել է, որ «Ավտոգազ» ՍՊԸ-ն հաստատագրված վճարների գծով ոչ մի պարտավորություն չունի: Ի պատասխան «Ավտոգազ» ՍՊԸ նշված գրության Տեսչությունը 26.05.2014 թ-ի տվ 3328 գրությամբ պատասխանել է, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ 01.01.2014 թ-ին ԽՀՎ ՀՏ-ից Նոր Նորքի ՀՏ տեղափոխվել է հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակում առկա 23509110 դրամ պարտավորությունով, որը չի համապատասխանել հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի թղթային տարբերակի մնացորդին.» միաժամանակ նշելով, որ Նոր Նորքի ՀՏ կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հաստատագրված վճարի թղթային և էլեկտրոնային տարբերակների անձնական հաշվի քարտերի մնացորդների տարբերությունը առաջացել է հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի թղթային տարբերակում 01.01.2003 թ-ից մինչև 01.01.2004 թ-ը հաստատագրված վճարի չափը ելակետային տիպի և ուղղիչ գործակցի արտադրյալի 500000-ապատիկի չափով հաշվարկելու հետևանքով: Մինչդեռ, միևնույն ժամանակահատվածի համար էլեկտրոնային տարբերակում հաստատագրված վճարը հաշվարկվել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ ՀՕ-485-Ն օրենքի (ընդունված 11.12.2002թ-ին) 2-րդ հոդվածի համաձայն՝ ելակետային տիպի և ուղղիչ գործակցի արտադրյալի 1000000-ապատիկի չափով.», այսինքն, հարկային օրենսդրության խախտման փաստը տեղի է ունեցել 01.01.2003 թ-ից մինչև 01.01.2004 թ-ը, իսկ Տեսչության կողմից հայտնաբերվել է, իր իսկ գրության համաձայն, 2014 թ-ին:

Տվյալ դեպքում, խախտումը կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարիների ընթացքում Տեսչության կողմից Բողոք բերողին հաստատագրված վճարի վճարման ծանուցագիր կամ որևէ այլ փաստաթուղթ չի ներկայացվել: Դեռ ավելին, Հայցվորի մոտ կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման ստուգումներ, որոնք ընդգրկել են 01.01.2003թ-ից մինչև 15.10.2012թ. ընկած ժամանակաշրջանը: Ստուգման արդյունքներով կազմված ակտերում հաստատագրված վճարի մասով խախտումներ չեն հայտնաբերվել:

Համաձայն Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 04.03.2008 թ-ի թիվ 401 գրության 01.03.2008 թ-ի դրությամբ «Ավտոգազ» ՍՊԸ-ի հետ բյուջեի նկատմամբ պարտք ու պահանջը, ըստ հարկատեսակների կազմում է՝ հաստատագրված վճարի մասով գերավճար 5042.4 դրամ: Համաձայն ԽՀՎ ՀՏ տեղեկատվության և վերլուծության բաժնի պետի, մի կողմից, և Հայցվորի տնօրենի ու հաշվապահի, մյուս կողմից, միջև կազմված՝ 01.01.2010 թ-ից մինչև 31.12.2010 թ. փոխադարձ հաշվարկների ստուգման Տեղեկանքի, 01.01.2010 թ-ի դրությամբ հաստատագրված վճարի մասով առկա է գերավճար 4199300 դրամի չափով, իսկ 01.01.2011 թ-ի դրությամբ՝ 3800 դրամի չափով: Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ 15.02.2012 թ-ի թիվ 313 տեղեկանքի 01.02.2012 թ-ի դրությամբ «Ավտոգազ» ՍՊԸ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունները, ըստ դիմումում նշված ամսաթվի դրությամբ տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների, ներառյալ ներկայացված հաշվետվությունների, կազմում են՝ հաստատագրված վճարի մասով դեբետային մնացորդ 3.576.968 դրամ, այսինքն՝ առկա է 3.576.968 դրամի չափով գերավճար, իսկ ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 07.03.2014 թ-ի թիվ 1549 տեղեկանքի համաձայն, հաստատագրված վճարի մասով դեբետային մնացորդը 0 դրամ է, այսինքն՝ որևէ պարտավորություն առկա չէ:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է 14.05.2014 թ-ի թիվ 450 որոշումը հաստատագրված վճարի մասով ճանաչել անվավեր, և որպես հետևանք Տեսչության 20.06.2014 թ-ի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 027623 որոշումը ճանաչել անվավեր ու կիրառել դրա անվավերության հետևանքները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ-ն 01.01.2014 թ-ին Խոշոր հարկ վճարողների ՀՏ-ից տեղափոխվել է Նոր Նորքի ՀՏ հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակում առկա 23509110 դրամ պարտավորությունով, որը չի համապատասխանել հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի թղթային տարբերակի մնացորդին: Նոր Նորքի ՀՏ կողմից կատարվել է ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ հաստատագրված վճարի թղթային և էլեկտրոնային տարբերակների անձնական հաշվի քարտերի մնացորդների տարբերությունն առաջացել է հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի թղթային տարբերակում 01.01.2003 թ-ից մինչև 01.01.2004 թ-ը հաստատագրված վճարի չափը ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 500.000-ապատիկի չափով հաշվարկելու հետևանքով: Մինչդեռ, մինևույն ժամանակահատվածի համար էլեկտրոնային տարբերակում հաստատագրված վճարը հաշվարկվել է հիմք ընդունելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ ՀՕ-485-Ն օրենքի (ընդունված 11.12.2002թ-ին) 2-րդ հոդվածի դրույթները՝ ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 1.000.000-ապատիկի չափով: Արդյունքում, Նոր Նորքի ՀՏ կողմից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի թղթային տարբերակում առկա հաստատագրված վճարի գծով պարտավորությունները վերահաշվարկվել են և համապատասխանեցվել են հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի էլեկտրոնային տարբերակում առկա պարտավորությանը: Ընդ որում, նշված համապատասխանեցումն իրականացվել է հիմք ընդունելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ ՀՕ-485-Ն օրենքի 2-րդ հոդվածի դրույթները:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի բ) կետի դրույթներով ընկերությունը պարտավոր էր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով ինքնուրույն հաշվարկել հաստատագրված վճարի գումարները և իրականացնել դրանց փոխանցումը բյուջե: Մինևույն ժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է

այն փաստը, որ ընկերության հաստատագրված վճարի անձնական հաշվի քարտի թղթային և էլեկտրոնային տարբերակներում տեղ գտած անհամապատասխանությանը նպաստել է նաև «Հարկատու» էլեկտրոնային համակարգին անցնելու փուլում առկա տեխնիկական խնդիրները, ինչպես նաև այն հանգամանքը, որ ընկերությունը ժամանակին չի տեղեկացվել իրական պարտավորությունների չափի վերաբերյալ: Բացի այդ, 01.01.2003 թ-ից մինչև 15.10.2012 թ-ն ընկած ժամանակաշրջանում ընկերությունում կատարվել են բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման ստուգումներ, սակայն ստուգումների արդյունքում կազմված ակտերում հաստատագրված վճարի մասով խախտումներ չեն հայտնաբերվել: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին»:

Նշված իրավանորմի դրույթներից ըստ էության հետևում է, որ ընկերությունում հաստատագրված վճարի գծով առկա պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները պետք է արտացոլվեին իրականացված ստուգումների արդյունքում կազմված ակտերում, ինչը, սակայն, չի իրականացվել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ անհրաժեշտ է կատարել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ հաստատագրված վճարի գծով առկա պարտավորությունների վերահաշվարկ, պարտավորությունների չափը սահմանելով 2003 թ-ից պակաս հաշվարկված հաստատագրված վճարի գումարների և ամսական կտրվածքով դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի հանրագումարը: Վերահաշվարկի արդյունքում ենթակա է վերանայման նաև Նոր Նորքի ՀՏ 20.06.2014 թ-ի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 027623 որոշումը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը


ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչությանը.

կատարել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ավտոգազ» ՍՊԸ հաստատագրված վճարի գծով առկա պարտավորությունների վերահաշվարկ, պարտավորությունների չափը սահմանելով 2003 թ-ից ամսական կտրվածքով պակաս հաշվարկված հաստատագրված վճարի գումարների և այդ գումարների նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հանրագումարները՝ առանց պարտավորությունները ժամանակագրական կարգով մարելու արդյունքում հաշվարկվող տույժերի:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ